

ք. Երևան

Երևանի քաղաքապետարանը, ի դեմս աշխատակազմի գնումների վարչության պետ Է. Կիրակոսյանի, որը գործում է Երևանի քաղաքապետի 14.11.2018 թվականի թիվ 3407-Ա որոշման հիման վրա (այսուհետև՝ Պատվիրատու), մի կողմից, և «ՋԻԷՆՋԻՔԵՅ ԳՐՈՒՊ» ՓԲԸ-ն, ի դեմս ընկերության տնօրեն Ա. Գասպարյանի (այսուհետև՝ Կատարող), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

**1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ**

1.1 Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում է **ավրոմեքենաների վերանորոգման** ծառայությունների մատուցման պարտավորությունը (այսուհետև՝ ծառայություն)՝ համաձայն սույն պայմանագրի (այսուհետև՝ պայմանագիր) անբաժանելի մասը կազմող N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջների:

1.2 Ծառայությունը մատուցվում է պայմանագրի N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան և սահմանված ժամկետներով:

**2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ**

2.1 Պատվիրատուն իրավունք ունի՝

2.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կատարողի կողմից մատուցվող ծառայության ընթացքը և որակը՝ առանց միջամտելու Կատարողի գործունեությանը.

2.1.2 Եթե մատուցվել է պայմանագրի N 1 հավելվածում նշված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին չհամապատասխանող ծառայություն.

ա) Չընդունել ծառայությունը՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ծառայությունը պայմանագրին համապատասխանող ծառայությամբ անհատույց փոխարինման որջամիտ ժամկետ և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը, ինչպես նաև 5.3 կետով նախատեսված տույժը.

բ) Հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու ծառայության համար վճարված գումարը և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը.

2.1.3 Միակողմանի լուծել պայմանագիրը, եթե Կատարողն էականորեն խախտել է պայմանագիրը: Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատուցված ծառայությունը չի համապատասխանում պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պահանջներին,

բ) խախտվել է ծառայության մատուցման ժամկետը:

**2.2 Պատվիրատուն պարտավոր է՝**

2.2.1 Քննարկել և ընդունել Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան մատուցված ծառայության արդյունքը, իսկ ծառայության արդյունքում թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ գրավոր հայտնել Կատարողին:

2.2.2 Ծառայության արդյունքն ընդունելու դեպքում Կատարողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

**2.3 Կատարողն իրավունք ունի՝**

2.3.1 Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները, իսկ Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետի խախտման դեպքում նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

**2.4 Կատարողը պարտավոր է՝**

2.4.1 Պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պայմաններով ապահովել ծառայության մատուցումը՝ ղեկավարվելով գործող օրենսդրությամբ:

2.4.2 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.3 Որակավորման և պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

**3. ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ**

3.1 Մատուցված ծառայությունն ընդունվում է Պատվիրատուի և Կատարողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է Պատվիրատուի և Կատարողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով ծառայության մատուցման համար նախատեսված օրը ներառյալ Կատարողը

կայքի «Էլեկտրոնային գնումներ» բաժնում՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 3): Ընդ որում Կատարողը հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է [www.procurement.am](http://www.procurement.am) հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

3.2 Եթե մատուցված ծառայությունը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Պատվիրատուն պայմանագրի 3.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 10 աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

3.3 Եթե մատուցված ծառայությունը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Պատվիրատուն չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 3.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Պատվիրատուն ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Կատարողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

3.4 Եթե պայմանագրի 3.2 կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն չի ընդունում մատուցված ծառայությունը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատուցված ծառայությունը համարվում է ընդունված և պայմանագրի 3.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

#### 4. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ

4.1. Սույն պայմանագրով Կատարողի մատուցման ենթակա ծառայության գինը կազմում է **մինչև 2000000 (երկու միլիոն) ՀՀ դրամ**, ներառյալ ԱԱՀ-ն:

Գինը ներառում է Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը՝ այդ թվում հարկերը, տուրքերը և ՀՀ օրենսդրությամբ սահմանված այլ վճարները:

Ծառայության մատուցման գինը կայուն է և Կատարողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

4.2 Պատվիրատուն իրեն մատուցած ծառայության դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կատարողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձնման-ընդունման արձանագրության հիման վրա՝ կնքվելիք պայմանագրի վճարման ժամանակացույցով նախատեսված չափերով և ամիսներին: Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է մինչև 30 աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 30-ը:

**Սյուն պայմանագրի շրջանակներում մատուցված ծառայությունների դիմաց վճարումներին իրականացվում են հետևյալ բանաձևով՝ ՎԳ=ՄԳ/ՆԳxԾxԲ, որտեղ՝**

**ՎԳ-ն պայմանագրով սահմանված առանձին տեսակի ծառայությունների մատուցման դիմաց վճարվող գումարն է.**

**ՄԳ-ն ընտրված մասնակցի առաջարկած հանրագումարային գինն է.**

**ՆԳ-ն ծառայության մատուցման համար սահմանված առավելագույն միավոր գների հանրագումարն է.**

**Ծ-ն մատուցված ծառայության առավելագույն միավորի գինն է.**

**Բ-ն մատուցված ծառայության քանակն է:**

#### 5. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Կատարողը պատասխանատվություն է կրում ծառայության մատուցման՝ պայմանագրի պահանջների պահպանման համար:

5.2 Պայմանագրի N 1 հավելվածում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ծառայություն մատուցելու յուրաքանչյուր դեպքում Կատարողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի 4.1 կետում նախատեսված գումարի 3 (երեք) տոկոսի չափով: 21 Ընդ որում տուգանքը հաշվարկվում է նաև ծառայությունը սույն պայմանագրով սահմանված ժամկետում մատուցելու, սակայն պատվիրատուի կողմից այդ չընդունվելու դեպքում:

5.3 Պայմանագրով նախատեսված ծառայության մատուցման ժամկետը խախտելու դեպքում Կատարողից յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար գանձվում է տույժ՝ մատուցման ժամկետից հարաբերակցորեն ծառայության գնի 0.1 (զրո պմբոց մեկ տասնորդական) տոկոսի չափով:

5.4 Դրանցում 5.2 և 5.3 կետերով սահմանված տուգանքը և տույժը ռազմարկվում և հաշվանցվում են ծառայություն մատուցելու արդյունքում Կատարողին վճարման ենթակա գումարների հետ:

5.5 Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետով նախատեսված ժամկետի խախտման դեպքում Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

5.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

## 6. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՌԻՓԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով և սույն պայմանագրի հիման վրա կնքված համաձայնագրերով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

## 7. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

7.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

7.2 Պայմանագրից ծագած կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

7.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կատարողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն միակողմանիորեն լուծում է պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կատարողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

7.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

7.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող ծառայության ծավալների կամ ձեռք բերվող ծառայության միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

7.8 Ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Կատարողի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ Պատվիրատուի մոտ չի վերացել ծառայության օգտագործման պահանջը, իսկ Կատարողի առաջարկությունը ներկայացվել է ոչ ուշ,

ժամկետը պարող է Երկարաժամկետ սեպ ասգաս սրսչս ՅՍ օրացուցայրս օրոյ, բայց ոչ ավել քաս պայմանագրով սահմանված ժամկետն է:

7.9 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կատարող կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կատարողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կատարողը:

7.10 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

7.11 Կատարողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է [www.procurement.am](http://www.procurement.am) հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կատարողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից: Պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը տեղեկագրում հրապարակվելու օրը Պատվիրատուն այն ուղարկվում է նաև Կատարողի էլեկտրոնային փոստին:

7.12 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են ՀՀ դատարաններում:

7.13 Սույն պայմանագիրը կազմված է 11 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Սույն պայմանագրի N 1, N 2, N 3 և N 3.1 հավելվածները հանդիսանում են պայմանագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ:

7.14 Սույն պայմանագրի նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

7.15 Սույն պայմանագրով Պատվիրատուի իրավունքներն ու պարտականությունները իրականացնում է Երևան քաղաքի Նորք-Մարաշ վարչական շրջանի աշխատակազմը:

**8. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ**

**Պ Ա Տ Վ Ի Ր Ա Տ Ո Ւ**  
Երևանի քաղաքապետարան  
ք. Երևան, Արգիշտի փող. 1  
Կենտրոնական գանձապետարան  
ՀՀ 9000124160013  
ՀՎՀՀ 02593108

**Կ ա տ ա ր ո ղ**  
«ՋԻԷՆՋԻԷՅ ԳՐՈՒՊ» ՓԲԸ  
Ք. Երևան, Արշակունյաց 119/12  
«Ակրա-Կրեդիտ Ազրիկոյ Բանկ» ՓԲԸ  
ՀՀ 220563330384000  
ՀՎՀՀ 01271541

Է. Կիրակոսյան  
(ստորագրություն)  
Կ.Տ.  


Ա. Գասպարյան  
(ստորագրություն)  
Կ.Տ.  


ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆԱՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ\*

| Գնումների պահով ախտաբանական միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ ասակարգման (CPV) | Կարգման  | Կարգման     |             |                |                  |                   |  |
|--|--|-------------|-------------|----------------|------------------|-------------------|--|
|  |  | Ինքնուրույն | Ինքնուրույն | Ինքնուրույն    | Ինքնուրույն      | Ինքնուրույն       | Ինքնուրույն  |
|  |  |             |             |                |                  |                   |  |
| 50111170/28  |  | Չ/Մ         | միավոր գինը | ընդհանուր գինը | ընդհանուր քանակը | հասցեն            | Ժամկետը  |
|  | Երևանի Նորք-Մարաշ վարչական շրջանի դեկավարի աշխատակազմի ծառայողական ա/մ-ի 2020թ. ընթացիկ վերանորոգման և սպասարկման ծառայությունների ձեռք բերման                               | դրամ        | 800000      | 800000         | 1                | Ա. Արմենակյան 272 | Պայմանագիրը ուժի մեջ մտնելու օրվանից մինչև 2020թ. դեկտեմբերի 25-ը ներառյալ |
| 50111170/29  | Ծառայողական ավտոմեքենաների /Շեվրոլե Նիվա/ 2011թ. արտադրության, 80 Ձ/ՈՐ հզորությամբ, թվով 1 հատընթացիկ վերանորոգման և սպասարկման ծառայություններ                              | դրամ        | 600000      | 600000         | 1                | Ա. Արմենակյան 272 | Պայմանագիրը ուժի մեջ մտնելու օրվանից մինչև 2020թ. դեկտեմբերի 25-ը ներառյալ |
| 50111170/30  | Ծառայողական ավտոմեքենաների / Շեվրոլե ավեո/ 2013թ. արտադրության, 100 Ձ/ՈՐ հզորությամբ, 1.4L աշխատանքային ծավալով, թվով 1 հատընթացիկ վերանորոգման և սպասարկման ծառայություններ | դրամ        | 600000      | 600000         | 1                | Ա. Արմենակյան 272 | Պայմանագիրը ուժի մեջ մտնելու օրվանից մինչև 2020թ. դեկտեմբերի 25-ը ներառյալ |

Գնացուցակ

| Չափաբաժնի համարը |  |                         |                       |                    |
|------------------|--|-------------------------|-----------------------|--------------------|
| Հ/հ              | Ընթացիկ, միջին և հիմնական նորոգման աշխատանքների անվանումները   | 1                       | 2                     | 3                  |
|                  |  | NISSAN<br>TEANNA<br>2.5 | CHEVRO<br>LET<br>AVEO | CHEVROLE<br>T NIVA |
| 1                | Բռնկման համակարգի ստուգում                                     | անվճար                  | անվճար                | անվճար             |
| 2                | Կցորդման համակարգի ստուգում                                    | անվճար                  | անվճար                | անվճար             |
| 3                | ԱՓՏ-ի աշխատանքի ստուգում                                       | անվճար                  | անվճար                | անվճար             |
| 4                | Բաշխիչ տուփի աշխատանքի ստուգում                                | անվճար                  | անվճար                | անվճար             |
| 5                | ABS համակարգի ստուգում   | անվճար                  | անվճար                | անվճար             |
| 6                | Էլեկտրական համակարգի աշխատանքի ստուգում                        | անվճար                  | անվճար                | անվճար             |
| 7                | Ղեկավարման համակարգի աշխատանքի ստուգում                        | անվճար                  | անվճար                | անվճար             |
| 1.Շարժիչ         |  |                         |                       |                    |
| 8                | Շարժիչի հանում և տեղադրում                                     | 60000                   | 50000                 | 50000              |
| 9                | Շարժիչի քանդում արատավորում և հավաքում                         | 30000                   | 30000                 | 30000              |
| 10               | Շարժիչի գլխիկի հանում տեղադրում միջադիրի փոխարինումով          | 10000                   | 10000                 | 10000              |
| 11               | Շարժիչի գլխիկի նորոգում, եռակցում հղկումով                     | 50000                   | 50000                 | 50000              |
| 12               | Շարժիչի գլխիկի փականների փոխարինում հղկումով                   | 50000                   | 50000                 | 50000              |
| 13               | Վառոցքի մոմի բնիկի նորոգում                                    | 10000                   | 10000                 | 10000              |
| 14               | Շարժիչի փականների զսպանակների փոխարինում                       | 25000                   | 25000                 | 25000              |
| 15               | Փականների խցուկների փոխարինում 1 կ-տ                           | 25000                   | 25000                 | 25000              |
| 16               | Հրիչների կամ հիդրոհրիչների փոխարինում 1 կ-տ                    | 10000                   | 10000                 | 10000              |
| 17               | Շարժիչի մխոցաօղերի, հիմնական և շարժաթևի ներդրակների փոխարինում | 50000                   | 50000                 | 50000              |
| 18               | Ծնկաձև լիսեռի հղկում   | 15000                   | 15000                 | 15000              |
| 19               | Ծնկաձև լիսեռի փոխարինում                                       | 50000                   | 50000                 | 50000              |
| 20               | Ծնկաձև լիսեռի ներդրակների փոխարինում 1 կ-տ                     | 30000                   | 30000                 | 30000              |
| 21               | Ծնկաձև լիսեռի ատամնանիվի փոխարինում                            | 50000                   | 50000                 | 50000              |
| 22               | Ծնկաձև լիսեռի ուղղում  | 50000                   | 50000                 | 50000              |
| 23               | Ծնկաձև լիսեռի առջևի խցուկի փոխարինում                          | 10000                   | 10000                 | 10000              |
| 24               | Ծնկաձև լիսեռի հետևի խցուկի փոխարինում                          | 10000                   | 10000                 | 10000              |
| 25               | Շարժիչի բլոկի փոխարինում                                       | 50000                   | 50000                 | 50000              |
| 26               | Շարժիչի գլանի փոխարինում 1 հատ                                 | 20000                   | 20000                 | 20000              |
| 27               | Շարժիչի բլոկի հղկում   | 10000                   | 10000                 | 10000              |
| 28               | Մխոցի փոխարինում 1 հատ   | 10000                   | 10000                 | 10000              |
| 29               | Բաշխիչ լիսեռի հանում և տեղադրում կամ փոխարինում                | 50000                   | 50000                 | 50000              |
| 30               | Բաշխիչ լիսեռի ականոցների հանում և տեղադրում կամ փոխարինում     | 20000                   | 20000                 | 20000              |
| 31               | Բաշխիչ լիսեռի խտաբուկի փոխարինում                              | 20000                   | 20000                 | 20000              |
| 32               | Փոկանիվի փոխարինում  | 10000                   | 10000                 | 10000              |
| 33               | Շարժիչի ատամնավոր փոկի փոխարինում                              | 10000                   | 10000                 | 10000              |
| 34               | Շարժիչի շղթայի փոխարինում                                      | 10000                   | 10000                 | 10000              |
| 35               | Յուղի մղիչի շղթայի փոխարինում                                  | 0                       | 0                     | 0                  |
| 36               | Շարժիչի վանոսների փոխարինում                                   | 0                       | 0                     | 0                  |
| 37               | Շարժիչի քարտերի նորոգում (եռակցում)                            | 15000                   | 15000                 | 15000              |
| 38               | Շարժիչի քարտերի փոխարինում, միջադիրի փոխարինումով              | 5000                    | 5000                  | 5000               |
| 39               | Շարժիչի քարտերի միջադիրի փոխարինում                            | 5000                    | 5000                  | 5000               |
| 40               | Շարժիչի քարտերի հանում, տեղադրում մաքրումով                    | 5000                    | 5000                  | 5000               |
| 41               | Շարժիչի յուղի մղիչի փոխարինում                                 | 20000                   | 20000                 | 20000              |
| 42               | Շարժիչի յուղի մղիչի նորոգում, մաքրում                          | 20000                   | 20000                 | 20000              |
| 43               | Շարժիչի յուղի մղիչի մաքրում                                    | 20000                   | 20000                 | 20000              |
| 44               | Շարժիչի յուղի մոնիտինգային կառավարում                          | 20000                   | 20000                 | 20000              |

|    |  |       |       |       |
|----|--|-------|-------|-------|
| 46 | Յուրի ծորակի փոխարինում  | 1000  | 1000  | 1000  |
| 47 | Օդաքաշակ փողրակի փոխարինում  | 5000  | 5000  | 5000  |
| 48 | Շարժիչ կոմպրեսորի փոխարինում (տուրբոմոդիչ)                                 | 0     | 0     | 0     |
| 49 | Շարժիչի վառելիքի բարձր ճնշման մոդիչի փոխարինում                            | 10000 | 10000 | 10000 |
| 50 | Շարժիչի բարձիկի հանում և տեղադրում կամ փոխարինում                          | 6000  | 5000  | 6000  |
| 51 | Բ/լիսեռի կափարիչի հանում և տեղադրում կամ փոխարինում                        | 5000  | 5000  | 5000  |
| 52 | Ուղղորդիչ վռանների փոխարինում  | 5000  | 5000  | 5000  |
| 53 | Թափանիվի հանում և տեղադրում կամ փոխարինում                                 | 30000 | 30000 | 30000 |
| 54 | Շարժիչի կափույրի փոխարինում  | 500   | 500   | 500   |
| 55 | Շարժիչի կափույրի միջադիրի փոխարինում                                       | 500   | 500   | 500   |
| 56 | Մխոցամատի փոխարինում   | 20000 | 20000 | 20000 |
| 57 | Շարժիչի շարժաթևի փոխարինում  | 20000 | 20000 | 20000 |
| 58 | Մխոցային օղակների փոխարինում 1 կ-տ   | 30000 | 30000 | 30000 |
| 59 | Շարժիչի բաշխիչ լիսեռի երիթակի փոխարինում                                   | 20000 | 20000 | 20000 |
| 60 | Ատամնանիվի փոխարինում  | 20000 | 20000 | 20000 |
| 61 | Ատամնանիվի փոկի փոխարինում   | 6000  | 5000  | 6000  |
| 62 | Ատամնավոր փոկի պատյանի փոխարինում  | 5000  | 5000  | 5000  |
| 63 | Սուխարիկ փոխարինում  | 5000  | 5000  | 5000  |
| 64 | Շարժիչի կալունի փոխարինում   | 5000  | 5000  | 5000  |
| 65 | Շարժիչի հանդարտիչի փոխարինում  | 5000  | 5000  | 5000  |
| 66 | Շարժիչի փոկի հոլովակի փոխարինում   | 5000  | 5000  | 5000  |
| 67 | Շարժիչի հոլովակի առանցքակալի փոխարինում                                    | 5000  | 5000  | 5000  |
| 68 | Շարժիչի առջևի կափարիչի փոխարինում, հանում, տեղադրում միջադիրի փոխարինումով | 15000 | 15000 | 15000 |
| 69 | Շարժիչի յուղի արանքաչափիչի (Քցտ) իրանի փոխարինում                          | 5000  | 5000  | 5000  |
| 70 | Շարժիչի փոկի ձգիչի փոխարինում  | 5000  | 5000  | 5000  |
| 71 | Շարժիչի փոկի ձգիչի նորոգում  | 5000  | 5000  | 5000  |
| 72 | Շարժիչի գամասեղի փոխարինում  | 5000  | 5000  | 5000  |
| 73 | Շարժիչի գամասեղի փոխարինում բնիկի նորոգումով                               | 10000 | 10000 | 10000 |
| 74 | Գլխիկի հեղույսի փոխարինում   | 5000  | 5000  | 5000  |
| 75 | Ծնկածև լիսեռի հեղույսի փոխարինում  | 20000 | 20000 | 20000 |
| 76 | Շարժիչի էլեկտրական համակարգի հանում տեղադրում                              | 30000 | 30000 | 30000 |
| 77 | Շարժիչի վառելիքի սնման համակարգի հանում տեղադրում                          | 10000 | 10000 | 10000 |

## 2. Ղեկավարման, սնման և յուղման համակարգ

|    |  |       |       |       |
|----|--|-------|-------|-------|
| 78 | Յուղի և յուղի գտիչի փոխարինում                       | 2000  | 2000  | 2000  |
| 79 | Ավտոմեքենայի յուղում                                 | 2000  | 2000  | 2000  |
| 80 | Համակարգչային ախտորոշում, թերությունների վերացմամբ   | 5000  | 5000  | 5000  |
| 81 | Յուղի ռադիատորի փոխարինում                           | 10000 | 10000 | 10000 |
| 82 | Յուղի ռադիատորի նորոգում                             | 20000 | 20000 | 20000 |
| 83 | Յուղի գտիչի փականի փոխարինում                        | 5000  | 5000  | 5000  |
| 84 | Արտածման կալեկտորի հանում և տեղադրում կամ փոխարինում | 20000 | 20000 | 20000 |
| 85 | Ներածման կալեկտորի հանում և տեղադրում կամ փոխարինում | 20000 | 20000 | 20000 |
| 86 | Արտածման կալեկտորի միջադիրի փոխարինում               | 10000 | 10000 | 10000 |
| 87 | Ներածման կալեկտորի միջադիրի փոխարինում               | 10000 | 10000 | 10000 |
| 88 | Վառելիքի փողրակի փոխարինում                          | 5000  | 5000  | 5000  |
| 89 | Վառոցքի մոմի փոխարինում 1 կ-տ                        | 2000  | 2000  | 2000  |
| 90 | Վառելիքի նուրբ մաքրման գտիչի փոխարինում              | 10000 | 10000 | 10000 |
| 91 | Օդի գտիչի փոխարինում                                 | 1000  | 1000  | 1000  |
| 92 | Կոնդիցիոների գտիչի փոխարինում                        | 1000  | 1000  | 1000  |
| 93 | Օդի ծախսաչափիչի հանում և տեղադրում կամ փոխարինում    | 10000 | 10000 | 10000 |
| 94 | Օդի ծախսաչափիչի փողրակի հանում և տեղադրում           | 10000 | 10000 | 10000 |
| 95 | Օդի գտիչի փողրակի հանում և տեղադրում                 | 10000 | 10000 | 10000 |
| 96 | Օդաքաշի փողրակի հանում և տեղադրում                   | 10000 | 10000 | 10000 |

|     |   |       |       |       |
|-----|---|-------|-------|-------|
| 98  | Ինժեկտորի բոցամուղերի փոխարինում 1 կ-տ                  | 10000 | 10000 | 10000 |
| 99  | Ինժեկտորի բոցամուղերի մաքրում                           | 10000 | 10000 | 10000 |
| 100 | Բոցամուղի կողավորում                                    | 10000 | 10000 | 10000 |
| 101 | Ինժեկտորի բոցամուղի խտաբուկերի փոխարինում               | 10000 | 10000 | 10000 |
| 102 | Բենզամղիչի փոխարինում                                   | 5000  | 5000  | 5000  |
| 103 | Վառելիքի կոշտ մաքրման գտիչի փոխարինում                  | 5000  | 5000  | 5000  |
| 104 | Վառելանյութի խողովակի հանում և տեղադրում կամ փոխարինում | 5000  | 5000  | 5000  |
| 105 | Բռնկման կարգավորում                                     | 5000  | 5000  | 5000  |
| 106 | CO կարգավորում  | 5000  | 5000  | 5000  |
| 107 | Ղեկավարման բլոկի հանում և տեղադրում կամ փոխարինում      | 5000  | 5000  | 5000  |
| 108 | Ղեկավարման բլոկի վերանորոգում                           | 20000 | 20000 | 20000 |
| 109 | Վառելիքի բաքի հանում և տեղադրում կամ փոխարինում         | 20000 | 20000 | 20000 |
| 110 | Վառելիքի բաքի մաքրում                                   | 30000 | 30000 | 30000 |
| 111 | Արագարարի ոտնակի փոխարինում                             | 10000 | 10000 | 10000 |
| 112 | Արագարարի ոտնակի տվիչի փոխարինում                       | 10000 | 10000 | 10000 |
| 113 | Օդի ծախսի տվիչի փոխարինում                              | 10000 | 10000 | 10000 |
| 114 | Տրամյորի հանում և տեղադրում կամ փոխարինում              | 5000  | 5000  | 5000  |
| 115 | Տրամյորի վերանորոգում                                   | 10000 | 10000 | 10000 |
| 116 | Ջրի քերմաստիճանի տվիչի փոխարինում                       | 10000 | 10000 | 10000 |
| 117 | Ջրի խողովակի, փողրակի փոխարինում                        | 10000 | 10000 | 10000 |
| 118 | Բենզոբաքի բենզոմղիչի ցանցի փոխարինում                   | 20000 | 20000 | 20000 |
| 119 | Բենզոբաքի բենզոմղիչի ցանցի մաքրում                      | 20000 | 20000 | 20000 |
| 120 | Յուղի ճնշման տվիչի փոխարինում                           | 20000 | 20000 | 20000 |
| 121 | Տվիչի փոխարինում  | 20000 | 20000 | 20000 |

### 3. Սառեցման և արտածման համակարգ

|     |   |       |       |       |
|-----|---|-------|-------|-------|
| 122 | Հովհարի փոխարինում  | 3000  | 3000  | 3000  |
| 123 | Հովհարի փոկի հանում և տեղադրում կամ փոխարինում              | 3000  | 3000  | 3000  |
| 124 | Ռադիատորի հանում և տեղադրում կամ փոխարինում                 | 30000 | 30000 | 30000 |
| 125 | Ռադիատորի շրջանակի փոխարինում                               | 10000 | 10000 | 10000 |
| 126 | Շերտափեղկի փոխարինում                                       | 10000 | 10000 | 10000 |
| 127 | Շերտափեղկի կառավարման ձգաձողի փոխարինում                    | 10000 | 10000 | 10000 |
| 128 | Ռադիատորի կալունակի փոխարինում                              | 10000 | 10000 | 10000 |
| 129 | Ռադիատորի փողրակի փոխարինում                                | 10000 | 10000 | 10000 |
| 130 | Կոնդիցիոների կոմպրեսորի հանում և տեղադրում կամ փոխարինում   | 20000 | 20000 | 20000 |
| 131 | Կոնդիցիոների կալունակի հանում և տեղադրում կամ փոխարինում    | 20000 | 20000 | 20000 |
| 132 | Կոնդիցիոների առանցքակալի փոխարինում                         | 10000 | 10000 | 10000 |
| 133 | Կոնդիցիոների ռադիատորի փոխարինում                           | 10000 | 10000 | 10000 |
| 134 | Կոնդիցիոների ռադիատորի նորոգում                             | 20000 | 20000 | 20000 |
| 135 | Կոնդիցիոների կոմպրեսորի նորոգում                            | 20000 | 20000 | 20000 |
| 136 | Ընդարձակող բաքի փոխարինում                                  | 10000 | 10000 | 10000 |
| 137 | Ընդարձակող բաքի փողրակի փոխարինում                          | 10000 | 10000 | 10000 |
| 138 | Ջրի ծորակի փոխարինում                                       | 5000  | 5000  | 5000  |
| 139 | Հովացման հիդրոկցորդի փոխարինում                             | 5000  | 5000  | 5000  |
| 140 | Հովացման համակարգի ռետինե փողրակի փոխարինում                | 5000  | 5000  | 5000  |
| 141 | Հովհարի շարժիչի հանում և տեղադրում կամ փոխարինում           | 20000 | 20000 | 20000 |
| 142 | Հովհարի թևանիվի հանում և տեղադրում կամ փոխարինում           | 20000 | 20000 | 20000 |
| 143 | Վառարանի ռադիատորի փոխարինում, բոլոր աշխատանքները ընդգրկված | 20000 | 20000 | 20000 |
| 144 | Վառարանի ռադիատորի նորոգում                                 | 30000 | 30000 | 30000 |
| 145 | Վառարանի շարժիչի փոխարինում                                 | 20000 | 20000 | 20000 |
| 146 | Թերմոստատի փոխարինում                                       | 5000  | 5000  | 5000  |
| 147 | Ջրի մղիչի փոխարինում միջադիրով                              | 5000  | 5000  | 5000  |
| 148 | Ջրի մղիչի միջադիրի փոխարինում                               | 5000  | 5000  | 5000  |

|     |   |       |       |       |
|-----|---|-------|-------|-------|
| 150 | Գեներատորի փոկի ձգող հոլովակի փոխարինում  | 5000  | 5000  | 5000  |
| 151 | Ջրի ռադիատորի վերանորոգում                | 5000  | 5000  | 5000  |
| 152 | Թերմոստատի միջադիրի փոխարինում            | 5000  | 5000  | 5000  |
| 153 | Սառեցման համակարգի օդահանում              | 5000  | 5000  | 5000  |
| 154 | Խլարարի գոֆրայի փոխարինում                | 20000 | 20000 | 20000 |
| 155 | Կատալիզատորի հանում                       | 20000 | 20000 | 20000 |
| 156 | Խլարարի կատալիզատորի տվիչի փոխարինում     | 20000 | 20000 | 20000 |
| 157 | Խլարարի հանում և տեղադրում կամ փոխարինում | 20000 | 20000 | 20000 |
| 158 | Խլարարի 1 հատ խողովակի փոխարինում         | 10000 | 10000 | 10000 |
| 159 | Խլարարի անուրի (xamyr) փոխարինում         | 10000 | 10000 | 10000 |
| 160 | Խլարարի ներդիրի փոխարինում                | 10000 | 10000 | 10000 |
| 161 | Խլարարի կախոցի փոխարինում                 | 10000 | 10000 | 10000 |
| 162 | Կալունակի փոխարինում                      | 10000 | 10000 | 10000 |
| 163 | Ռեզոնատորի փոխարինում                     | 10000 | 10000 | 10000 |
| 164 | Հովացման հեղուկի փոխարինում               | 2000  | 2000  | 2000  |

#### 4. Կցորդում, ՓՏ և ԱՓՏ

|     |   |        |        |        |
|-----|---|--------|--------|--------|
| 165 | Աշխատանքային կամ գլխ. գլանի հանում և տեղադրում կամ փոխարինում       | 10000  | 10000  | 10000  |
| 166 | Աշխատանքային կամ գլխ. գլանի հիմնական նորոգում ներառյալ աշխատանքները | 30000  | 30000  | 30000  |
| 167 | Կցորդման սկավառակների և առանցքակալի փոխարինում                      | 10000  | 10000  | 10000  |
| 168 | Կցորդման ոտնակի հանում և տեղադրում կամ փոխարինում                   | 10000  | 10000  | 10000  |
| 169 | Կցորդման ճոպանի հանում և տեղադրում կամ փոխարինում                   | 10000  | 10000  | 10000  |
| 170 | Կցորդման փողրակի հանում և տեղադրում կամ փոխարինում                  | 10000  | 10000  | 10000  |
| 171 | Կցորդման երկժանիի փոխարինում  | 10000  | 10000  | 10000  |
| 172 | ՓՏ-ի հիմնական նորոգում, ներառյալ բոլոր աշխատանքները                 | 30000  | 30000  | 30000  |
| 173 | ՓՏ-ի հավաքածուի փոխարինում  | 30000  | 30000  | 30000  |
| 174 | ՓՏ-ի փոխարինում   | 30000  | 30000  | 30000  |
| 175 | ՓՏ-ի առջևի խտաբուկի փոխարինում                                      | 30000  | 30000  | 30000  |
| 176 | ՓՏ-ի հետևի խտաբուկի փոխարինում                                      | 30000  | 30000  | 30000  |
| 177 | ՓՏ-ի համաժամիչի փոխարինում  | 30000  | 30000  | 30000  |
| 178 | ՓՏ-ի և ԱՓՏ-ի հանում և տեղադրում                                     | 30000  | 30000  | 30000  |
| 179 | ՓՏ-ի քանդում, արատավորում, հավաքում                                 | 30000  | 30000  | 30000  |
| 180 | ՓՏ-ի պատյանի հանում և տեղադրում կամ փոխարինում                      | 5000   | 5000   | 5000   |
| 181 | ՓՏ-ի առանցքակալի փոխարինում   | 5000   | 5000   | 5000   |
| 182 | ՓՏ-ի միջանկյալ լիսեռի փոխարինում                                    | 10000  | 10000  | 10000  |
| 183 | ՓՏ-ի ատամնանիվի փոխարինում  | 10000  | 10000  | 10000  |
| 184 | ՓՏ-ի առաջնային լիսեռի փոխարինում                                    | 10000  | 10000  | 10000  |
| 185 | ՓՏ-ի երկրորդային լիսեռի փոխարինում                                  | 10000  | 10000  | 10000  |
| 186 | ՓՏ-ի փոխարկման մեխանիզմի փոխարինում                                 | 10000  | 10000  | 10000  |
| 187 | ՓՏ-ի փոխարկման մեխանիզմի վերանորոգում                               | 10000  | 10000  | 10000  |
| 188 | ՓՏ-ի բարձիկի փոխարինում   | 5000   | 5000   | 5000   |
| 189 | ՓՏ-ի փոխանցման լծակի փոխարինում                                     | 10000  | 10000  | 10000  |
| 190 | ՓՏ-ի յուղի փոխարինում   | 5000   | 5000   | 5000   |
| 191 | Վազքաչափի շարժաբերի փոխարինում                                      | 20000  | 20000  | 20000  |
| 192 | ԱՓՏ-ի հիմնական նորոգում, ներառյալ բոլոր աշխատանքները                | 200000 | 200000 | 200000 |
| 193 | ԱՓՏ-ի հավաքածուի փոխարինում   | 50000  | 50000  | 50000  |
| 194 | ԱՓՏ-ի փոխարինում  | 50000  | 50000  | 50000  |
| 195 | ԱՓՏ-ի ատամնանիվի փոխարինում   | 20000  | 20000  | 20000  |
| 196 | ԱՓՏ-ի կոնվերտերի հանում և տեղադրում կամ փոխարինում                  | 10000  | 10000  | 10000  |
| 197 | ԱՓՏ-ի տանող սկավառակի փոխարինում                                    | 20000  | 20000  | 20000  |
| 198 | ԱՓՏ-ի կցորդման գլխավոր գլանի կալունակի փոխարինում                   | 20000  | 20000  | 20000  |
| 199 | ԱՓՏ-ի սովետիղների փոխարինում  | 20000  | 20000  | 20000  |
| 200 | ԱՓՏ-ի հիմնական նորոգում և սուբստրուկտի փոխարինում                   | 30000  | 30000  | 30000  |

|     |  |       |       |       |
|-----|--|-------|-------|-------|
| 202 | ԱՓՏ-ի յուրի մղիչի խտաբուկերի փոխարինում                    | 20000 | 20000 | 20000 |
| 203 | ԱՓՏ-ի ռադիատորի նորոգում                                   | 20000 | 20000 | 20000 |
| 204 | ԱՓՏ-ի ռադիատորի փոխարինում                                 | 20000 | 20000 | 20000 |
| 205 | ԱՓՏ-ի հիդրոագույցի փոխարինում                              | 20000 | 20000 | 20000 |
| 206 | ԱՓՏ-ի յուրի գտիչի փոխարինում                               | 10000 | 10000 | 10000 |
| 207 | ԱՓՏ-ի յուրի փոխարինում                                     | 5000  | 5000  | 5000  |
| 208 | ԱՓՏ-ի գտիչի լվացում, մաքրում՝ քարտերի հանում և տեղադրումով | 20000 | 20000 | 20000 |

### 5. Բաշխիչ տուփ, կարդանային լիսեռ

|     |  |   |   |       |
|-----|--|---|---|-------|
| 209 | Բաշխիչ տուփի հիմնական նորոգում, ներառյալ բոլոր աշխատանքները    | 0 | 0 | 50000 |
| 210 | Բաշխիչ տուփի հանում և տեղադրում կամ փոխարինում                 | 0 | 0 | 15000 |
| 211 | Բաշխիչ տուփի քանդում և արատավորում, հավաքում                   | 0 | 0 | 20000 |
| 212 | Բաշխիչ տուփի բարձր փոխանցման մեխանիզմի փոխարինում              | 0 | 0 | 15000 |
| 213 | Բաշխիչ տուփի ցածր փոխանցման մեխանիզմի փոխարինում               | 0 | 0 | 15000 |
| 214 | Բաշխիչ տուփի դիաֆրագմաների փոխարինում                          | 0 | 0 | 15000 |
| 215 | Բաշխիչ տուփի շարժաբերի փոխարինում                              | 0 | 0 | 15000 |
| 216 | Բաշխիչ տուփի դիֆերենցիալի փոխարինում                           | 0 | 0 | 15000 |
| 217 | Բաշխիչ տուփի միջակա լիսեռի փոխարինում                          | 0 | 0 | 15000 |
| 218 | Բաշխիչ տուփի առաջնային լիսեռի փոխարինում                       | 0 | 0 | 15000 |
| 219 | Բաշխիչ տուփի երկժանիի փոխարինում                               | 0 | 0 | 15000 |
| 220 | Բաշխիչ տուփի բարձիկի փոխարինում                                | 0 | 0 | 5000  |
| 221 | Բաշխիչ տուփի խտաբուկի փոխարինում                               | 0 | 0 | 5000  |
| 222 | Բաշխիչ տուփի առանցքակալի փոխարինում                            | 0 | 0 | 5000  |
| 223 | Կարդանային լիսեռի հանում և տեղադրում կամ փոխարինում            | 0 | 0 | 10000 |
| 224 | Կարդանային լիսեռի խաչուկի փոխարինում                           | 0 | 0 | 5000  |
| 225 | Բաշխիչ տուփի կալունակի հանում և տեղադրում կամ փոխարինում       | 0 | 0 | 15000 |
| 226 | Տվիչի փոխարինում   | 0 | 0 | 5000  |
| 227 | Բաշխիչ լիսեռի ատամնանիվի փոխարինում                            | 0 | 0 | 10000 |
| 228 | Կարդանային լիսեռի միջ. կախցի հանում և տեղադրում կամ փոխարինում | 0 | 0 | 5000  |
| 229 | Բաշխիչ տուփի շղթայի փոխարինում                                 | 0 | 0 | 10000 |

### 6. Առջևի և հետևի կամրջակներ

|     |  |       |       |       |
|-----|--|-------|-------|-------|
| 230 | Առջևի կամրջակի հանում և տեղադրում կամ փոխարինում                             | 60000 | 60000 | 60000 |
| 231 | Առջևի կամրջակի գլխավոր փոխանցման (ռեդուկտոր) քանդում, արատավորում և հավաքում | 30000 | 30000 | 30000 |
| 232 | Առջևի կամրջակի կիսաստնու հանում և տեղադրում կամ փոխարինում                   | 10000 | 10000 | 10000 |
| 233 | Առջևի կամրջակի կիսաստնու առանցքակալի փոխարինում                              | 10000 | 10000 | 10000 |
| 234 | Առջևի կամրջակի կիսաստնու առանցքակալի խտաբուկերի փոխարինում                   | 10000 | 10000 | 10000 |
| 235 | Կամրջակի յուրի փոխարինում  | 3000  | 3000  | 3000  |
| 236 | Առջևի կամրջակի բռունցքի գնդաձև հենարանի հանում և տեղադրում կամ փոխարինում    | 10000 | 10000 | 10000 |
| 237 | Առջևի կամրջակի բլոկավորման համակարգի նորոգում                                | 10000 | 10000 | 10000 |
| 238 | Առջևի կամրջակի տվիչի փոխարինում  | 10000 | 10000 | 10000 |
| 239 | Առջևի կամրջակի դիֆերենցիալի փոխարինում                                       | 30000 | 30000 | 30000 |
| 240 | Հետևի կամրջակի հանում և տեղադրում կամ փոխարինում                             | 20000 | 20000 | 20000 |
| 241 | Հետևի կամրջակի լիկատար քանդում, արատավորում և հավաքում                       | 30000 | 30000 | 30000 |
| 242 | Հետևի կամրջակի մասնակի քանդում, արատավորում և հավաքում                       | 20000 | 20000 | 20000 |
| 243 | Հետևի կամրջակի կիսաստնու հանում և տեղադրում կամ փոխարինում                   | 10000 | 10000 | 10000 |
| 244 | Հետևի կամրջակի կիսաստնու առանցքակալի փոխարինում                              | 10000 | 10000 | 10000 |
| 245 | Հետևի կամրջակի կիսաստնու առանցքակալի խտաբուկերի փոխարինում                   | 10000 | 10000 | 10000 |

|     |   |       |       |       |
|-----|---|-------|-------|-------|
| 246 | Հետևի կամրջակի բռունցքի գնդաձև հենարանի հանում և տեղադրում կամ փոխարինում | 10000 | 10000 | 10000 |
| 247 | Հետևի կամրջակի դիֆերենցիալի փոխարինում                                    | 10000 | 10000 | 10000 |
| 248 | Հետևի կամրջակի բլոկավորման համակարգի նորոգում                             | 10000 | 10000 | 10000 |
| 249 | Կամրջակի տվիչի փոխարինում   | 5000  | 5000  | 5000  |
| 250 | Կամրջակի իրանի փոխարինում (փցսՍՍ)   | 5000  | 5000  | 5000  |
| 251 | Կամրջակի յուղի փոխարինում   | 3000  | 3000  | 3000  |

## 7. Կախոց

|     |  |       |       |       |
|-----|--|-------|-------|-------|
| 252 | Տրավերսի հանում և տեղադրում կամ փոխարինում                   | 10000 | 10000 | 10000 |
| 253 | Ձախ կամ աջ հողակապի հանում և տեղադրում կամ փոխարինում        | 5000  | 5000  | 5000  |
| 254 | Առջևի անվակունդի առանցքակալի փոխարինում                      | 5000  | 5000  | 5000  |
| 255 | Առջևի անվակունդի հանում և տեղադրում կամ փոխարինում           | 5000  | 5000  | 5000  |
| 256 | Հետևի անվակունդի հանում և տեղադրում կամ փոխարինում           | 5000  | 5000  | 5000  |
| 257 | Հետևի անվակունդի առանցքակալի փոխարինում                      | 5000  | 5000  | 5000  |
| 258 | Անվակունդի գամասեղի և հեղյուսի փոխարինում(մեկ անիվի համար)   | 2000  | 2000  | 2000  |
| 259 | Ձախ կամ աջ հողակապի խտաբուկերի փոխարինում                    | 5000  | 5000  | 5000  |
| 260 | Ցնցամեղմիչի թասակի փոխարինում                                | 5000  | 5000  | 5000  |
| 261 | Առջևի զսպանակի փոխարինում                                    | 5000  | 5000  | 5000  |
| 262 | Առջևի ցնցամեղմիչի հանում և տեղադրում կամ փոխարինում          | 5000  | 5000  | 5000  |
| 263 | Պնևմոցնցամեղմիչի փոխարինում                                  | 5000  | 5000  | 5000  |
| 264 | Պնևմոցնցամեղմիչի բարձիկների փոխարինում                       | 5000  | 5000  | 5000  |
| 265 | Հարվածամեղմիչի վռանների փոխարինում                           | 5000  | 5000  | 5000  |
| 266 | Ներքևի լծակի հանում և տեղադրում կամ փոխարինում               | 10000 | 10000 | 10000 |
| 267 | Ներքևի լծակի վռանների փոխարինում 1 հատ                       | 5000  | 5000  | 5000  |
| 268 | Ներքևի լծակի հեղույսի փոխարինում                             | 5000  | 5000  | 5000  |
| 269 | Հարվածիչի (բարձիկի փոխարինում)                               | 5000  | 5000  | 5000  |
| 270 | Անիվների պաշտպանիչի փոխարինում                               | 5000  | 5000  | 5000  |
| 271 | Շարժիչի պաշտպանիչի փոխարինում                                | 5000  | 5000  | 5000  |
| 272 | Վերևի լծակի հանում և տեղադրում կամ փոխարինում                | 10000 | 10000 | 10000 |
| 273 | Վերևի լծակի վռանների փոխարինում 1 հատ                        | 5000  | 5000  | 5000  |
| 274 | Վերևի լծակի հեղույսի փոխարինում                              | 5000  | 5000  | 5000  |
| 275 | Հետևի վերևի լծակի վռանի փոխարինում 1 հատ                     | 5000  | 5000  | 5000  |
| 276 | Գնդե հողակապի պատյանի փոխարինում                             | 5000  | 5000  | 5000  |
| 277 | Գնդե հողակապի փոխարինում                                     | 5000  | 5000  | 5000  |
| 278 | Գնդե հողակապի նորոգում                                       | 10000 | 10000 | 10000 |
| 279 | Առջևի կայունարարի հանում և տեղադրում կամ փոխարինում          | 10000 | 10000 | 10000 |
| 280 | Առջևի կայունարարի վռանների փոխարինում                        | 5000  | 5000  | 5000  |
